
**ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ ԳԵՐՄԱՆԵՐՆԵՐԻ
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ԹԱԲԱՂՅԱՆ Ս.Վ.

Թարգմանությունն այն գործընթացն է, որի ժամանակ առկա են թարգմանվող (բնօրինակ) և համարժեք բնագրերը, այն է՝ հաղորդակցվող բնօրինակ լեզվից նյութը համարժեքորեն փոխանցվում է մեկ ուրիշ լեզու: Նոր բնագրի համարժեքությունը պահանջում է երեք էական պայման.

1. թարգմանվող նյութը պետք է հնարավորինս հաղորդի բնօրինակի բովանդակությունը,

2. պետք է հաշվի առնվեն լեզուներում գործող քերականական կանոններն ու տվյալ լեզուներին բնորոշ քերականական առանձնահատկությունները,

3. պահպանվեն տվյալ լեզուների ոճաբանական, բառային, քերականական, տրամաբանական և արտահայտչամիջոցների կիրառելի համարժեքություններն ու կանոնները:

Թարգմանության գործընթացում թույլատրելի է ինչպես պասսիվ (գրական), այնպես էլ գործուն (խոսակցական) բառերի կիրառությունը: Միջլեզվային հաղորդակցություններում և լեզվական հարաբերություններում թարգմանական փորձը վկայում է, որ ոչ միշտ է հաջողվում համապատասխան, համարժեք բառերով կատարել թարգմանությունը, հաճախ օգնում է նաև ստեղծագործական մոտեցումը: Ասենք, եթե նյութը թարգմանվում է հայերեն, ապա պետք է համապատասխանի հայեցի մտածելակերպին: Հաջողված օրինակները շատ են: Հիշատակության են արժանի Գրիմ եղբայրների հեքիաթների թումանյանական, Հ. Հայնեի բանաստեղծությունների տեղյանական թարգմանությունները: Ինչպես հայտնի է, բնօրինակ մեկ բառը կարող է ունենալ իրարից շատ տարբեր բազմաթիվ իմաստներ և նշանակություններ, որոնք անպայման անհրաժեշտ է նկատի առնել ինչպես գեղարվեստական, այնպես էլ գիտական թարգմանությունների ժամանակ: Այսպես, օրինակ, *die Wirtschaft* բառը նշանակում է տնտեսություն, տնտեսագիտություն, ճաշարան, պանդոկ, երեսառածություն, այլասերվածություն և այլն¹: Հմուտ թարգմանիչը դրանց միջից ընտրում է այն բառը, որը համապատասխանում է թարգմանվելիք լեզվի համատեքստին: *Wagen* բառի՝ համարժեքները կապվում են մի ընդհանուր հասկացությամբ և իմաստով մոտ են՝ շարժում (փոխադրամիջոց): *Wagen* նշանակում է կառք, ավտո, սայլ, վագոն և

¹ Անդրեասյան Գ. Մ., Գերմաներեն-հայերեն բառարան, Ե., 1976, էջ 826:

այլն²: Կոնկրետ տարբերակի ընտրությունն այս կամ այն բառային միավորի փոխանցման ժամանակ մեծ նշանակություն ունի որակյալ թարգմանության համար: Ինչպես ասում է հայտնի լեզվաբան Ա. Արխիպովը, «Այդ տարբերակներից ընտրվում է այն մեկը, որը այլ պայմանների հետ մեկտեղ ավելի լիարժեք է հաղորդում բնօրինակ բառ-միավորի արդիական նշանակությունը կամ բովանդակությունը³»:

Անշուշտ, լեզվի հնությունը, հարստությունը, քերականական և բառային ամեն տեսակի կատեգորիաների բազմազանությունը, լեզվառճական արտահայտչաձևերի նույնությունը նպաստում են թարգմանական գործի բարձր մակարդակին, թարգմանական-ստեղծագործական հմտությունների կատարելագործմանը: Թարգմանիչը իր գործին պետք է ձեռնամուխ լինի մեծագույն պատասխանատվությամբ: Նա կատարելապես պետք է տիրապետի թարգմանության գործընթացում առկա երկու լեզուների և՛ գրական, և՛ խոսակցական բառապաշարին, հաշվի առնի այդ լեզուներին բնորոշ սահմանափակումները, քարացած արտահայտությունները, ասույթները, ասացվածքները, դարձվածքները և բարբառային տարբերակները: Այսպես, եթե *Ausser Acht lassen* առանձին բառերը թարգմանենք բառացիորեն, դուրս կգա՝ *բացի ուշադրություն թողնել*. սա, իհարկե, անմտություն է: Իսկական թարգմանությունն է՝ ուշադրություն չդարձնել, աչքաթող անել: Մեկ այլ օրինակ. *Ende gut, alles gut* - եթե վերջը լավ է, ամեն ինչ լավ է (բառացի թարգմանությունը պարզապես բառերի շարք է՝ ավարտ լավ, ամեն ինչ լավ):

Գերմաներենից հայերեն թարգմանությունների ժամանակ հատկապես պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ գերմաներենում մոդալության կատեգորիան արտահայտվում է այդ լեզվին հատուկ բայական ներքին կանոնների համակարգով: Լեզվաբան Ե. Կրաշենինիկովան գրում է. «Դրանք անկանոն բառացանկի մեջ մտնող պրետերիտո-պրեզենտային բայեր են»⁴. դրանց մեծ մասը առաջացել է մի շարք բայերի անցյալ (*Präteritum* կամ *Imperfekt*) և ներկա (*Präsens*) ձևերից: Օրինակ, *wollen* (ուզենալ, կամենալ) առաջացել է *wolta[welta]*-ից, *lassen*-ը (թույլատրել, թույլ տալ)՝ *lazan*-ից և այլն:

Գերմաներենում շատ բարդ բառեր, որոնց թարգմանությունները բառարաններում հաճախ չկան, բաժանում ենք բաղադրիչների, առանձին թարգմանում և իմաստները միացնում, որը, սակայն, կարող է հանգեցնել սխալ թարգմանությունների: Այսպես, օրինակ, *Zugführer*-ը բառացի թարգմանվում է՝ մեքենավար, բայց նշանակում է գնացքի պետ, *Lehrplan*-ը՝ ուսման ծրագիր, սակայն նշանակում է ուսումնական ծրագիր, դասացուցակ և այլն:

² Նույն տեղում, էջ 799:

³ Архипов А. Ф., Самоучитель перевода с немецкого языка на русский, М., 1991, с. 13.

⁴ Крашениникова Е., Модальные глаголы в немецком языке, М., 1954, с. 3.

Ուշադրություն պետք է դարձնել հատկապես համառոտագրություններին և հապավումներին, որոնք մեծ կիրառություն ունեն լեզուներում, օրինակ՝ *USA-ԱՄՆ*: Թարգմանության ընթացքում ևս կիրառվում է բաղադրիչների միայն սկզբնատառերը թողնելու սկզբունքը: Տեղանունների և անձնանունների թարգմանությունների ժամանակ դրանք կամ նույնությամբ տառադարձվում են կամ ենթարկվում են մասնակի, անգամ ամբողջական ձևափոխությունների: Օրինակ՝ *Herakles* - Հերակլես, *Rom* - Հռոմ, *Haag* - Հաագա, *Rein* - Հոենոս, *Osterreich* - Ավստրիա, *Weichsel* - Վիսլա, *Greichenland* - Հունաստան, *Frankreich* - Ֆրանսիա, *Bayern* - Բավարիա, *Mailand* - Միլան, *Armenien* - Հայաստան և այլն:

Նախադասության գլխավոր և երկրորդական անդամների համաձայնության խնդիրը ևս կարող է դժվարություններ հարուցել թարգմանության գործում: Առանձնապես կարևոր է գերմաներենին բնորոշ համապատասխան հոդերի կիրառության համարժեքներ գտնելը: Ճիշտ ընկալելով թարգմանվող նյութի մեջ եղած նախադասությունների և առանձին վերցրած բառերի փոխաբերական, դարձվածային և ուղղակի իմաստները՝ անհրաժեշտ է հնարավորինս ճշգրիտ փոխանցել դրանք թարգմանվող լեզվին: Օրինակ՝ *Ein Übersetzer ist fast immer ein Sprachkenner* – Յուրաքանչյուր թարգմանիչ համարյա միշտ լեզվի գիտակ է:

Թարգմանությունների ընթացքում չի կարելի անտեսել դիմելաձևերի, ողջույնի, շնորհավորանքի, մաղթանքների ճիշտ կիրառությունները համապատասխան լեզուներում, որոնք կարևոր են քաղաքական, դիվանագիտական, կազմակերպչական, ինչպես նաև մասնագիտական հարցերի պարզաբանման ժամանակ: Ամեն մի լեզու ունի դիմելաձևերի, ողջույնի և հրաժեշտի հատուկ միջոցներ: Որպեսզի երկու և ավելի լեզուներով թարգմանությունը լինի կատարյալ, պետք է հաշվի առնել թեման: Թեմաները կարող են տարբեր լինել՝ շնորհավորանք, բարեմաղթանք, գործնական խոսակցություն, ընդունելություն, հրահանգ, հրավեր, հանդիսություն, անակնկալ և այլն: Այլևայլ ժողովուրդների յուրահատուկ մտածելակերպը և լեզվական առանձնահատկությունները նաև ստեղծագործական թարգմանությունների հնարավորություն են ընձեռում: Կան կիրառություններ, երբ անգամ դրանց թարգմանական ճշգրիտ համարժեքներն ամբողջ նախադասությանը սխալ բովանդակություն են հաղորդում: Օրինակ՝ *Die Lebensbedingungen auf dem Lande gleichen sich denen der Stadt an*. Գյուղի պայմանները հավասարվում են քաղաքի պայմաններին: Կամ՝ *Das tragende Prinzip* - հիմնական սկզբունք: Այսպիսի օրինակները եզակի չեն, և թարգմանության ընթացքում անհրաժեշտ է մշտապես հարազատ մնալ բնագրին:

Լեզուն անընդհատ զարգանում է. դրան են նպաստում գիտական նորանոր նվաճումներն ու հայտնագործությունները, որոնք իրենց բառային արտահայտություններն են գտնում լեզվում: Նոր բառերի և տերմինների համարժեքներ ստեղծելը խիստ արդիական է թարգմանության գործընթացում:

ЗАМЕТКИ О ПЕРЕВОДАХ С НЕМЕЦКОГО ЯЗЫКА НА АРМЯНСКИЙ

ТАБАГЯН С. В.

Резюме

Перевод достаточно сложный и вместе с тем интересный и творческий процесс, требующий следующих необходимых условий: переводимый материал должен по мере возможностей быть близок содержанию оригинала с учетом грамматических особенностей языка при использовании стилистических, лексических, грамматических и логических эквивалентов.

При переводе следует оставаться верным оригиналу и языковому мышлению переводимого языка.